ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

• ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ

ՀՀ մշակույթի նախարարի տեղակալ ՆԵՐՍԵՍ ՏԵՐ-ՎԱՐԴԱՆՅԱՆ

• ՔԱՂԱՔ /ԵՐԿԻՐ/ԺԱՄԿԵՏ

Բուխարեստ (Ռումինիա), մայիսի 17-19-ը, 2017 թ.

• ՆՊԱՏԱԿԸ

- ✓ **Ռումինիայի մշակույթի և ազգային ինքնության նախարարության պետքարտուղարներ Ալեքսանդրու-Վասիլե Օպրեանի, Էրվին Շիմշենսոնի ու մի շարք ոլորտային պատասխանատուների հետ հանդիպումներ՝ մշակութային համագործակցության հնարավոր ուղղությունների քննարկման նպատակով:**
- ✓ **Ռումինիայի պատմության ազգային թանգարանի տնօրեն Էռնես Օբերլանդեր-Տըռնովեանուի հետ հայկական քաղաքակրթությանը նվիրված «Արարատից Կարպատներ. ռումինահայոց պատմական ժառանգությունը» խորագրով ցուցահանդեսի կազմակերպման մանրամասների քննարկում:**

Հայ-ռումինական մշակութային համագործակցության շրջանակներում, Ռումինիայում ՀՀ դեսպանության առաջարկով և Ռումինիայի մշակույթի և ազգային ինքնության նախարարության պետքարտուղար Ալեքսանդրու-Վասիլե Օպրեանի

հրավերով ս. թ. մայիսի 17-19-ը մեկնեցի Բուխարեստ (Ռումինիա)՝ քննարկելու հետագա համագործակցության մի շարք ուղղություններ՝ մասնավորապես Ռումինիայի պատմության ազգային թանգարանում նախատեսվող՝ «Արարատից Կարպատներ. ռումինահայոց պատմական ժառանգությունը» խորագրով ցուցահանդեսի կազմակերպման մանրամասները՝ բովանդակային, ֆինանսական, պետական երաշխիքների տրամադրման հարցերը:

Այցիս առաջին օրը՝ **մայիսի 17-ին,** Բուխարեստի Հայոց միությունում հանդիպում ունեցա ՌՀՄ նախագահ Վարուժան Ոսկանյանի հետ՝ պատմաբան Սորին Անտոխիի և գրող Պետրոս Խորասանջյանի մասնակցությամբ: Քննարկվեցին Ռումինիայի հայ համայնքի մասնակցությամբ ծրագրերի իրականացման հնարավորությունները:

Նույն օրն առաջնորդարանում հանդիպում ունեցա Ռումինիայի Հայոց թեմի առաջնորդ Տ. Տաթև եպիսկոպոս Հակոբյանի հետ: Հանդիպման ընթացքում խոսեցինք մի շարք ծրագրերի, այդ թվում՝ Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի ռումիներեն թարգմանելու նախագծի մասին:

Մայիսի 18-ին հանդիպում ունեցա Ռումինիայի մշակույթի և ազգային ինքնության նախարարի տեղակալ, պետքարտուղար Ալեքսանդրու-Վասիլե Օպրեանի հետ: Հանդիպմանը ներկա էին Ռումինիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Համլետ Գասպարյանը, ՌՊԱԹ-ի գլխավոր տնօրեն Էռնեստ Օբերլանդեր-Տըռնովեանուն, Ռումինիայի մշակույթի նախարարության այլ պատասխանատուներ: Զրույցի ընթացքում երկու կողմերն էլ գոհունակություն հայտնեցին հայ-ռումինական մշակութային համագործակցության շրջանակներում իրականացված ծրագրերի վերաբերյալ: Առաջարկվեց ընդլայնել համագործակցությունը կինոյի և գրահրատարակչության բնագավառներում՝ հիմք ընդունելով ՀՀ և Ռումինիայի կառավարությունների միջև մշակույթի, կրթության և գիտության ոլորտներում համագործակցության ծրագիրը: Առանձնակի ուշադրության արժանացան

ռումինահայ մշակութային հարուստ ժառանգության ուսումնասիրման, պահպանման և դրա ներկայացման հետ կապված համատեղ ծրագրերը, մասնավորապես՝ Բուխարեստում անցկացվելիք «Արարատից Կարպատներ. ռումինահայոց պատմական ժառանգությունը» խորագրով ցուցահանդեսի կազմակերպման հարցը: Հայաստանի պատմության թանգարանի և Ռումինիայի պատմության ազգային թանգարանի միջև Ռումինիայի պատմության ազգային թանգարանում «Արարատից Կարպատներ. ռումինահայոց պատմական ժառանգությունը» խորագրով ցուցահանդեսի կազմակերպման պայմանավորվածությունը ձեռք է բերվել դեռևս 2015 թվականին, սակայն մի շարք պատճառներով ցուցահանդեսի կազմակերպումը հետաձգվել է: Կազմակերպման հիմնական խնդիրն առնչվում է Հայաստանից տարվող ցուցանմուշների համար Ռումինիայի կողմից պետական երաշխիքների տրամադրմանը, որն, ըստ թանգարանի տնօրենի, սովորաբար տևում է 8 ամիս և պահանջում է մի շարք փաստաթղթային հիմնավորումներ: Նկատի ունենալով, որ մեր օրենսդրությունը ենթադրում է պետական երաշխիքի առկայություն որևէ բնօրինակ ցուցանմուշի համար, պայմանավորվեցինք, որ Հայաստանից ցուցանմուշներ կտրամադրվեն միայն վերջինիս առկայության դեպքում, այլապես ցուցահանդեսը կարող է իրականացվել կամ Ռումինիայում գտնվող ցուցանմուշներով և Հայաստանի պատմության թանգարանի տրամադրած՝ թանգարանային արժեք համարվող մասնագիտական կրկնօրինակների համադրմամբ, կամ պարզապես Ռումինիայում առկա ցուցանմուշներով:

Հանդիպման ավարտին շնորհակալություն հայտնեցի գործընկերոջս հրավերի և ջերմ ընդունելության համար:

Օրվա երկրորդ կեսին այցելեցի Ռումինիայի Պատմության ազգային թանգարան, որտեղ աշխատանքային խորհրդակցություն ունեցա ՌՊԱԹ-ի գլխավոր տնօրեն Էռնեստ Օբերլանդեր-Տրոնովեանուի հետ: Քննարկվեցին կայանալիք ցուցահանդեսի ֆինանսական և կազմակերպական մանրամասները, ինչպես նաև հստակեցվեցին Ռումինիայի պատմության ազգային թանգարանի և

Հայաստանի պատմության թանգարանի միջև ստորագրվելիք հուշագրի մանրամասները: Ռումինական կողմը խոստացավ սեղմ ժամկետներում հստակեցնել պետական երաշխիքներ տրամադրելու հնարավորությունը:

Օրվա ավարտին այցելեցի Բուխարեստի հայկական վայրեր, ծանոթացա Բուխարեստում հայազգի ճարտարապետների հեղինակած շինություններին՝ Ռազմական ակումբ, Ճարտարապետության դպրոց, Ռումին ուղղափառ եկեղեցու պատրիարքարան:

Մայիսի 19-ի առավոտյան Ռումինիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Համլետ Գասպարյանի ուղեկցությամբ այցելեցի Բուխարեստի Հայոց եկեղեցի, Դուդյան թանգարան և գրադարան, ինչպես նաև «Արարատ» պարբերականի խմբագրատուն և հրատարակչություն: Տեղեկացա, որ Ռումինիայի կառավարությունը նախատեսում է հատուկ աջակցություն տրամադրել՝ գոյություն ունեցող թանգարանի հենքի վրա հայկական ժառանգությունը ներկայացնող թանգարանի կառուցման համար:

Այնուհետև հանդիպեցի Ռումինիայի մշակույթի և ազգային ինքնության նախարարության պետքարտուղար Էրվին Շիմշենսոնի, նախարարության կինոյի և հրատարակչական գործի, գրքի ցուցահանդեսների պատասխանատուների հետ:

Զրույցի ընթացքում ներկայացրեցի ՀՀ մշակույթի նախարարության գրահրատարակչական ոլորտի ծրագրերը՝ մասնավորապես օտարերկրյա հրատարակիչներին հայ գրականության թարգմանությունների հրատարակմանն աջակցելու «Հայ գրականությունը թարգմանություններում» ծրագիրը: Ռումինիայում նմանատիպ գրանտային ծրագիր իրականացնում է Ռումինիայի մշակույթի ինստիտուտը՝ տրամադրելով ֆինանսավորում ոչ միայն թարգմանությունների, այլև տպագրական ծախսերի համար: Տեղեկացրեցի, որ Հայաստանը 2016 թվականից

անդամակցում է «Euroimage» ԵՄ ծրագրին, ինչը համատեղ ֆիլմարտադրության լուրջ հնարավորություններ է ստեղծում: Միաժամանակ հայտնեցի, որ առաջիկայում նախատեսվում է շրջանառել կինոարտադրության ոլորտը կանոնակարգող ՀՀ օրենքի նախագիծը, որը ենթադրելում է ներդրված գումարի որոշակի մասի վերադարձ՝ այդպիսով խրախուսելով ֆիլմարտադրության ոլորտում օտարերկրյա ներդրումները: Գործընկերս ներկայացրեց այս բնագավառում Ռումինիայում գործող պետական քաղաքականության մոդելը, որով պետական բյուջեից բացի, ֆինանսավորում է տրամադրվում պետական վիճակահանության եկամտի 4 տոկոսի չափով:

Հայտնեցի նաև, որ շուտով Հայաստանն անդամակցելու է «Ստեղծարար Եվրոպա» (Creative Europe) ծրագրին, որը լայն հնարավորություն է տալիս երկու երկրների հասարակական կազմակերպություններին՝ ներկայացնելու համատեղ նախագծեր համաեվրոպական բնույթի մշակութային ծրագրերի իրականացման համար:

Պայմանավորվեցինք երկուստեք նպաստել կինոարտադրողների և մշակութային կազմակերպությունների համագործակցությանը՝ Euroimage և Creative Europe ծրագրերի շրջանակում համատեղ նախագծեր ներկայացնելու համար:

Օրվա ավարտին շրջայց կատարեցի Ռումինիայի հավաքածուների թանգարան, «Գրիգոր Զամբակչյան» թանգարան, պատմության քաղաքային թանգարան, Թեոդոր Ամանի տուն-թանգարան:

Այցիս ընթացքում կայացավ նաև հանդիպում հայ համայնքի ներկայացուցիչների հետ, այդ թվում՝ պատգամավոր և Ռումինիայի օրենսդիր մարմնում ազգային փոքրամասնությունների գործերը համակարգող Վարուժան Փամբուկչյանի, թարգմանիչ Մադլեն Գարագաշյանի և այլոց հետ: Քննարկվեցին մի շարք հարցեր, այդ թվում՝ հայ գրականությունը ռումիներեն թարգմանելու, Հայկական փողոցի փառատոնի (Armenian Street Fest) կազմակերպմանն օժանդակելու հնարավորությունները և այլն:

- **ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

- ***Ռումինիայի մշակույթի և ազգային ինքնության նախարարության պետքարտուղար Ալեքսանդրու-Վասիլե Օպրեանի և Ռումինիայի պատմության ազգային թանգարանի տնօրեն Էռնես Օբերլանդեր-Տըռնովեանուի հետ պայմանավորվածություն ձեռք բերվեց «Արարատից Կարպատներ. ռումինահայոց պատմական ժառանգությունը» խորագրով ցուցահանդեսի համար կարճ ժամկետում վերջնականացնել պետական երաշխիքների տրամադրման հնարավորությունը, այն չլինելու դեպքում ցուցահանդեսը կազմակերպել կամ Հայաստանի պատմության թանգարանի մասնագիտական կրկնօրինակներով, կամ միայն Ռումինիայում առկա ցուցանմուշներով:***
- ***Ռումինիայի մշակույթի և ազգային ինքնության նախարարության պետքարտուղար Էրվին Շիմշենսոնի ու մի շարք ոլորտային պատասխանատուների հետ պայմանավորվեցինք երկուստեք նպաստել կինոարտադրողների և մշակութային կազմակերպությունների համագործակցությանը՝ Euroimage և Creative Europe ծրագրերի շրջանակում համատեղ նախագծեր ներկայացնելու համար:***

Կցանկանայի առանձահատուկ շնորհակալությունս հայտնել Ռումինիայում ՀՀ դեսպանության աշխատակազմին և հատկապես դեսպան Համլետ Գասպարյանին՝ բոլոր հանդիպումները և գործուղման ողջ ընթացքը լավագույնս կազմակերպելու համար:

ՀՀ մշակույթի նախարարի տեղակալ՝

Ն. ՏԵՐ-ՎԱՐԴԱՆՅԱՆ